



**Նայասանը միայն
հող չէ, Նայասանը
նաեւ ու մանավանդ
ժողովուրդ է՝ իր
դէտականությամբ:**

ԱՐԱՍ Ա
Մեծի Տանն Կիլիկիո
կաթողիկոս

Սյունյաց Երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 2 ՀՈՒՆԻՍԻ 2015Թ.
№ 19 (362)

www.syuniacyerkir.am



Մտորումներ կապանյան՝ ընդդեմ հոսանքի թանկացման բողոքի երթի շուրջ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կայացրած որոշումը՝ 6,93 դրամով էլեկտրաէներգիայի թանկացման մասին, օգոստոսի 1-ից ուժի մեջ կմտնի, ըստ որի՝ 0,38 կՎ լարմամբ սնվող սպառողների եւ բնակչության համար սահմանվեց ցերեկային սակագին՝ 48,78 դրամ/կՎտ ժամ, գիշերային սակագին՝ 38/78 դրամ/կՎտ ժամ, 6(10) կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝ ցերեկային սակագին՝ 45,78 դրամ/կՎտ, գիշերային սակագին՝ 35,78 դրամ/կՎտ, 35կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝ ցերեկային սակագին՝ 39,78 դրամ/կՎտ, գիշերային սակագին՝ 35,78 դրամ/կՎտ, 110 կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝ ցերեկային սակագին՝ 37,28 դրամ/կՎտ, գիշերային սակագին՝ 33,28 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Հանձնաժողովն էլեկտրաէներգիայի 6,93 դրամով թանկացումը հիմնավորեց դոլար-դրամ փոխարժեքի տատանմամբ, սակավաջրությամբ, ատոմակայանի աշխատանքի կանգով:

Մինչ բուն նյութին անցնելը թույլ տվեք «շնորհակալություն» հայտնել հանձնաժողովին, որ 17 դրամով չի բարձրացրել էլեկտրոգիայի սակագինը, որ «ընդառաջել» է քաղաքացիներին՝ առանց այն էլ սոցիալական լուրջ խնդիրներ ունեցող հասարակ մարդկանց:

Իսկ հիմա՝ ավելի լուրջ: Տեսական ժամանակ է՝ «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության անդամները ցույցեր, երթեր են կազմակերպում՝ ընդդեմ հոսանքի թանկացման: Բայց ինչպես փորձն է ցույց տալիս, Հայաստանում նմանատիպ բողոքի ցույցերը ոչ միշտ են արդյունք տալիս՝ ես մեկ անգամ ապացուցելով, որ հասարակ քաղաքացիների բողոքի ձայնն իշխանական վերնախավում այնքան էլ լսելի չէ:

Մեր երկրի իրական պահանջատերը լինելու, ոչ մի լուսա ավելի չվճարելու հետեւողական պայքարի ճանապարհն ընտրելու հիմնական նպատակով հունիսի 19-ին հանրապետության մայրաքաղաքում եւ մի շարք այլ բնակավայրերում, այդ թվում՝ Սիսիանում ու Կապանում, մեկնարկեցին բողոքի երթեր՝ ընդդեմ հոսանքի թանկացման:

«Ոչ թալանին», «Դեմ ենք էլեկտրոգիայի թանկացմանը» վանկարկումներով Կապանի «Լեռնագործ» իյուրանոցի հրապարակից դեպի Շահումյան հրապարակ շարժվեցին երթի մասնակիցները:

Այստեղ մենք նպատակ չունենք կազմակերպիչներից կամ երթի մասնակիցներից խոսելու. հոսանքի թանկացումն ազգային խնդիր է, եւ բոլորս պիտի միասնաբար պայքարենք դրա դեմ: Մեր խնդիրն ավելի շատ կապանցիների՝ այս հարցում մոտեցումը ներկայացնելն է:

Այն, որ անտարբերությունը, անմիաբանությունն ու սեփական իշխանությանը չհավատալը դարձել են մեր մենթալիտետին բնորոշ հատկանիշներ, ապացուցման կարիք չունեցող փաստ է, իսկ եթե ավելի պատկերավոր՝ արթնո՞ւմ: Դրանում համոզվեցինք երթի ընթացքում, երբ մասնակիցները տխրությամբ արձանագրեցին այն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր

Մայրաքաղաքի Բաղրամյան փողոցում տասը օր շարունակ տեղի է ունենում բողոքի ակցիա՝ ընդդեմ էլեկտրոգիայի սակագնի բարձրացման

Թեմային առնչվող նյութերը՝ 2-րդ եւ 6-րդ էջերում:

Զորահանդես Գորիսում

Հունիսի 20-ին Գորիսի Գրիգոր Տաթևացու հրապարակում հանդիսավորությամբ նշվեց ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին բանակային կորպուսի կազմավորման 19-ամյակը:

Ձինվորական նվազախմբի հանդիսավոր երաժշտության ներքո հրապարակ բերվեց կորպուսի մարտական դրոշմը, որից հետո սկսվեց միտինգը:

Իր ելույթում 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը մասնավորապես նշեց, որ ժամանակի թելադրանքով ստեղծված զորամիավորումը տարիների ընթացքում կայացավ՝ ներկայումս պատրաստ լինելով դիմակայել ամեն մի փորձության: Նա շնորհակալություն հայտնեց ստորաբաժանումներին՝ արժանապատվության ու անկոտորուն կամքի համար, որի շնորհիվ կորպուսի 2-րդ առանձին մոտոհրաձգային գումազդ պարզեատրվել է «Կարդան Մամիկոնյան»,

14-րդ առանձին մոտոհրաձգային գումազդ՝ 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշաններով: Բանակաշինության գործում ունեցած նշանակալից ձեռքբերումների եւ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության համար բանակային կորպուսին ենթակա 155-րդ առանձին հրետանային գումազդ, 25-րդ առանձին, 585-րդ տանկային եւ հետախուզական գումարտակները նույնպես պարգևատրվել են մարտական դրոշմներով:

Տ.Փարվանյանը շնորհավորեց 1-ին բանակային կորպուսի նախկին հրամանատարներին, ովքեր ներդրում են ունեցել կորպուսի կայացման գործում եւ մինչ օրս ավանդ են ներդրում հայ ժողովրդի անվտանգ ու խաղաղ արարման համար:

Հրամանատարը շնորհավորեց նաեւ տանկային գումարտակի, ինչպես եւ 2-րդ ու 3-րդ բանակային կորպուսների կազմավորման





ՆԱԽԱԳԱՅԸ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԿԱՅՐԵԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 27-ին խորհրդակցություն է անցկացրել հանրապետության տնտեսական քաղաքականության պատասխանատուների հետ, որի ընթացքում շարունակվել են Հայաստանի էներգետիկ անվտանգությանը, այդ համակարգի հետագա առողջացմանը և առկա խնդիրներին լուծումներ գտնելուն ուղղված քննարկումները: Խորհրդակցության սկզբում հանրապետության նախագահը հանգամանորեն անդրադարձել է վերոնշյալ խնդիրներին, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հիմնավորումներին, միաժամանակ իր դիրքորոշումն ու մտտեցումները ներկայացրել վերջին օրերին հասարակական ակտիվիստների բողոքի ակցիայի ժամանակ բարձրացվող խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

«Վարչապետի հետ մենք երեկ կրկին շատ երկար ենք խոսել և որոշել ենք այսօրվա մեր այս հերթական քննարկումը ավելի տեսանելի դարձնել մարդկանց համար, լուսաբանել այն, թեպետ աշխատանքային քննարկումները սովորաբար չեն լուսաբանվում, քանի որ հասարակության համար առաջնային են արդյունքները և ոչ թե այն աշխատանքը, որ կատարվում է դրանց հասնելու համար: Այնուամենայնիվ, սա կարելու է այսօր, որպեսզի մարդիկ տեսնեն, թե վերջին ամիսների ընթացքում այսպես ինտենսիվորեն ընթացող մեր քննարկումներն ինչ ուղղությամբ են գնում, որտեղից ենք սկսել, որտեղ ենք հիմա և ուր ենք ուզում հասնել:»

Անկեղծ ասած՝ այս գործընթացի մասին ես ուզում էի խոսել նաև մեր հասարակական ակտիվիստների հետ, երբ նրանք հանդիպում էին ցանկացել, ես ես նրանց հրավիրել էի գրուցելու: Ինչպես, բողոքի ակցիայի վերաբերյալ մեր մտտեցումները չեն փոխվել, թեկուզե հանդիպելու համար կարծես հնարավոր չէրավ խուճաբ ընտրել, ես չեմ փոխվել նաև մեր հորդորները՝ խոսելու, բողոքելու, բարձրաձայնելու իրավունքի իրականացման ընթացքում զերծ մնալ անօրինակամտություններից, ես, ի վերջո, հրաժարվել մայրաքաղաքի կենտրոնը առավել ծանրաբեռնելու քայլերից:

Այդ, ժողովրդավարության ուղին, քաղաքացիական հասարակության

կայացման ուղին բարդ է խորհուրդ է, սակայն դեպի ժողովրդավարություն տանող ուղուն մեր երկիրն այլընտրանք չունի: Այս մասին վերջին տարիների ընթացքում մենք մեկ անգամ չենք խոսել: Այս խորհուրդը ու ոլոր ճանապարհով պիտի ընթանանք բոլորս: Այդ ճանապարհին սայթաքելով ու գլորվելով, աշխատելով ու անքուն գիշերներ անցկացնելով, իրար ցավեցնելով ու իրար սատարելով, իրար սովորեցնելով ու իրարից սովորելով, իրար չհասկանալով ու իրար լսելով, իրար չվստահելով և իրար հավատալով, երբեմն գոռալով ու վրդովվելով... իրարից նեղանալով ու իրար հարգելով... որովհետև այդ ճանապարհը պիտի անցնենք բոլորով, յուրաքանչյուրս առանձին վերցրած... որովհետև ճանապարհի հանգրվանին պիտի հասնենք բոլորով, առանց կորցնելու իրար, հեռանալով իրարից ու իրար մոտենալով, բայց միշտ իրար հետ... սակայն Աստված չանի, որ չեղվենք այդ ճանապարհից ու իրար կորցնենք այս բարդ աշխարհում... Այդ դեպքում կկորցնենք մեր ապագան, հերթական անգամ կկորցնենք «մենք»-ը ու էլի երկար հարյուրամյակներ չենք գտնի, կդառնանք ուրիշ «մենք»-ի մի մասնիկը, մինչև օրերից մի օր նորից բոլորով կանգնենք մեկ ուղու վրա՝ ինչպես 1988-ին:

Երբ ես ասում եմ, որ մենք պիտի սովորենք իրարից, մենք պիտի միշտ դեմքով լինենք մեկս մյուսին. ես նկատի ունեմ բոլորին, յուրաքանչյուրին: Եվ իշխանությունը, ես իրավապահները, ես ցուցարարներն այս ուղղությամբ արել են առաջին քայլերը, ես դա բնական է:

Նաև ուզում եմ հստակ հայտնել իմ դիրքորոշումը այն մարդկանց, այն ուժերի հանդեպ, որոնք իրենց պատեհական շահերի համար պատրաստ են սադրել, սրել իրավիճակը, անդոնել մեր վստահության դարուփոսերը, ովքեր խաղաղ հավաքները պատրաստ են մարտադաշտ դարձնել՝ մեկ ժամով այդ մարտադաշտում գորավար լինելու մարմաջով... նմանների հանդեպ իրավապահները եղել են լինելու են խիստ ու անողոք...

Ցավոք, շատ հարցերի պատասխանները հնարավոր չէ տալ այնքան արագ եւ այնպես, ինչպես կցանկանայինք բոլորս: Եվ հաճախ, խնդիրների լուծման արագության եւ մեր ակնկալիքների դիմաց վճա-

րում են իրավապահները, մինչդեռ այդ խնդիրների լուծման բեռը նրանցը չէ: Հաճախ հենց նրանք են հարկադրված կատարել ամենածանր աշխատանքը, ես, ցավոք, հաճախ հասարակության անվտանգությունն ապահովող, իր պարտականությունը կատարող ոստիկանը նույնպես դառնում է ամենաթողության զոհ:

Այս առումով պետք է շեշտեն նաև լրագրողների ու լրատվամիջոցների դերը. շատ կարելու է առավելապես բռնության եւ քաոսի դրամատիկ պատկերներ լսարանին արհեստականորեն հրամցելու փոխարեն, անկառավարելի մի քանի արկածախնդրի վրա կենտրոնանալու փոխարեն, արժանի մատուցել այն բազմաթիվ խաղաղ ցուցարարներին, որոնք էլ հենց խաղաղ հավաքների ոգին են, կամքն են ու միտքը: Բռնության կոչով մեկ պատկերը կարող է կրկին ու կրկին հայտնվել էկրաններին եւ սոցիալական ցանցերում, իսկ հազարավոր խաղաղ ցուցարարները մնան սովորում: Բարեբախտաբար պիտի մշտն, որ այս օրերին մեր լրատվամիջոցների հերոսներն ավելի ու ավելի հաճախակի եղել են հենց խաղաղ ցուցարարները եւ հենց հայկական լրատվամիջոցների ջանքերով աշխարհը ստանում է հավասարակշռված տեղեկատվություն իրադարձությունների վերաբերյալ, իսկ մեր պետությունը կարողանում է հակազդել հակահայկական ապատեղեկատվությանը:

Ուզում եմ արձանագրել մի փաստ եւս. ցուցարարները եւ իրավապահներն այս մի քանի օրերի ընթացքում կարողացան ավելի մեծ փոխադարձ վստահություն ձեւավորել, քան հնարավոր էր մի քանի տասնամյակի ընթացքում: Ես, անշուշտ, հետեւել եմ վերջին զարգացումներին եւ ուզում եմ արձանագրել, որ հունիսի վերջին շաբաթվա ընթացքում Հայաստանը դարձավ մի մեծ ու արդյունավետ ուսումնական կենտրոն՝ համալսարան, որտեղ մեր քաղաքացիներն ու իրավապահները, լրագրողներն ու պատգամավորները, մտավորականներն ու օտարերկրացիները սովորեցնում էին իրար ու սովորում էին իրարից, լսում էին իրար, անգամ խնդրի համդեպ անհանդուրժողականությամբ ավետափ լցված հանդուրժում էին միմյանց, լսում էին այնպես, ինչպես աշխարհի քիչ անկյուններում իրար լսել գիտեն:

Այս օրերին մենք հիացնում ենք բոլորին մեր պատասխանատվությամբ եւ ակտիվությամբ: Ակնկալում եմ, որ երիտասարդները նույնպիսի խոհեմություն եւ իմաստություն կցուցաբերեն նաև մեր վաղվա օրվա հանդեպ, իսկ մեր վաղվա օրվա ապահովությունը պահանջում է պահպանել այն կենսական համակարգերը, որոնք սնունդ են մեր երկրի տնտեսությունն ու յուրաքանչյուրիս ընտանիքը: Մենք չենք կարող կտրել մեր երկրի կենսական օրգանները սնող զարկերակներն ու երակները միայն այն բանի համար, որ դրանք ախտահարված են հիվանդությամբ: Մենք չենք կարող մեր երկիրը զրկել արյունից ու թթվածնից՝ կենտրոնանալով միայն նրա էներգետիկ զարկերակներն ախտահարած խնդիրների պատճառների վրա: Առաջնահերթ կերպով մենք պիտի լուծումներ փնտրենք այդ կենսական համակարգը փրկելու համար՝ զուգահեռաբար բուժելով այն, վերականգնելով այն, դարձնելով այն անխոցելի ապագայում, եւ այս նախաձեռնության մեջ մեզ համար դժվար օրերում ու սոցիալական բարդ իրավիճակում մենք միայնակ չենք: Վերջին տարիների ինտեգրացիոն գործընթացները նոր հնարավորություններ են բացել մեր երկրի համար: Վարչապետի գլխավորությամբ մեր պատասխանատուները ակտիվ աշխատում են եվրասիական տնտեսական միության մասնագիտացված կառույցների հետ, որպեսզի նոր-նոր թափ հավաքող այս ինստիտուտները իրենց ակտիվ դերակատարմամբ նոր լուծումներ բերեն Հայաստանի էներգետիկ համակարգի եւ սակագնի օբյեկտիվ բարձրացման սոցիալական բեռը չեզոքացնելու եւ ժողովրդի ուսերից վերցնելու համար: Սա գործընթաց է, որն ակտիվորեն իրականացվում է, եւ մեր պատաս-

խանատուները հետևողականորեն աշխատում են մեր գործընկերների հետ: Հավատում եմ, որ լուծումները չեն ուշանա:

Մյուս կողմից, մենք ունենք նաև մեր քայլերի մշակված քարտեզը:

Երեկ, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսական կողմի նախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակության հետ համդեպ միջոցառումներ են անցկացվել այն մասին, որ ճիշտ կլինեք միջկառավարական հանձնաժողովի կողմից դիտարկվել «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵՒՍ» ընկերության դուստր ձեռնարկության Հայաստանի բաշխիչ ցանցերի գործունեության մանրագին աուդիտի անցկացման հնարավորությունը նրանց ամբողջ գործունեության ընթացքի համար՝ փորձագիտական հանրության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ, խնդիրները, որ կարող են լինել դուստր ձեռնարկությունում, մեր պետական մարմինների աշխատանքով առավելագույնս դուրս են սակագնի հաշվարկից, այնուամենայնիվ, այդ ընկերության հնարավոր խնդիրները մեզ հետաքրքրում են, քանի որ մենք, որպես պետություն, շահույթահարկի մասով հետաքրքրված ենք ընկերության շահույթի մեծությամբ: Այս առումով աշխատանքը կարելու է ոչ միայն ռուսական կողմի համար, այլև Հայաստանի համար: Բայց սա խնդրի մի կողմն է միայն եւ չի առնչվում սակագնին:

Հիմա սակագնի մասով: Ես խորապես համոզված եմ, որ սակագնի բարձրացումն արդարաց-



Արամ Ա կաթողիկոսը մտախոհություն է հայտնել

Ըստ Iragir.am-ի՝ Սեօի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինն անդրադարձ է կատարել վերջին շաբաթվա ընթացքում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ Հայաստանում տեղի ունեցած բողոքի ակցիաներին:

Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Անթիլիասի մամուլի ծառայությունը, Վեհափառ Հայրապետը մասնավորապես իր մտախոհությունն է արտահայտել տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ:

«Այս իրավիճակում լուռ մնալը ճիշտ չենք համարում: Ստահող ենք: Ստահող ենք, որովհետև մեր հայրենիքի հզորացումը, մեր միասնականության ամրապնդումը, մեր ազգային պահանջատիրության նոր խայծ, նոր թափ տալու համազգային պահանջը մեր ժողովրդի համար պետք է դառնա համազգային մտախոհություն: Հայաստանը միայն հող չէ, Հայաստանը նաև ու մանավանդ ժողովուրդ է իր պետականությանը: Մեր սպասումն է, որ մեր ժողովրդի ղեկավարները Հայաստանում լսեն մեր ժողովրդին, հետևեն մեր ժողովրդի սպասումներին, կարիքներին, պահանջներին: Միաժամանակ մեր սպասումն է, որ մեր ժողովուրդն էլ կլսի իր կողմից ընտրված պետականության պատասխանատուների մտախոհությունները, մտտեցումները», – ասել է Արամ Առաջինը:

Կիլիկիո կաթողիկոսական աթոռի գահակալը կոչ է արել, որպեսզի ժողովուրդն ու պետական իշխանությունները կարողանան միասնաբար մտածեն մեր ազգի, ժողովրդի ու պետության գերագույն շահերի մասին: «Հայրենիքի հզորացումը մեր ժողովրդի համար պետք է ամեն բանից վեր դիտարկվի: Ի՞նչ անել, ինչպե՞ս անել, որպեսզի մեր հայրենիքի պետական հիմքերն ավելի հզորանան, մեր ժողովրդի կյանքն ավելի բարելավվի: Մենք բոլորս Սփյուռքում եւս պետք է այդ գիտակցությամբ առաջնորդվենք», – շեշտել է Արամ կաթողիկոսը:

Ազգային բանակ



Զորահանդես Գորիսում

Էջ 1  հերթական տարեդարձի կապակցությամբ (այդ օրը տոնական էր նաև նրանց համար):

«Մեր զինվորներին մաղթում են ինաստուություն, կամք, աշխրջություն, զգոնություն, անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ հայրենի օջախներ, սպաներին՝ կամային բարձր հատկություններ, ինաստուություն, վետերաններին՝ ուժ, կորով, առողջ եւ երկար կյանք, անկտորում կամք: Թող հայ ժողովուրդը վատահ լինի, որ ամենալավ զենքը հայ զինվորն է՝ իր արիական ոգով», - մաղթեց Տ. Փարվանյանը:

Սյունիքի մարզպետի խորհրդակալ, զեդապետ Վոլոդյա Յովհաննիսյանը ներկայացրեց մարզպետի շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես նշվել էր. «Արցախյան հաղթական պատերազմից հետո բանակաշինության զարգացումը պարտադրեց խոշոր զորամիավորումների կազմավորման անհրաժեշտությունը, որի արդյունքում 1996թ. ստեղծվեց առաջին բանակային կորպուսը: Այն յուրաքանչյուր հրամանատարի, սպայի եւ զինվորի մարտական ոգու, կորովի, ուժի, խիզախության ու ունակությունների զնով հայրենիքը պաշտպանելու կարողության ու կամքի արդյունք էր: Բանակային կորպուսը կոչված էր եւ մեկ խնդրի լուծման՝ պաշտպանել հայրենիքի սահմանների անձեռնմխելիությունը, հայրենիքի պետական շահերը եւ հայ ժողովրդի խաղաղ ապրելու իրավունքը»:

Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը համոզմունք հայտնեց, որ կորպուսի 19-ամյա տարեդարձը ողջ հայ ժողովրդի տոնն է. պանծալի ուղի անցած կորպուսը դարձել է յուրաքանչյուրիս հպարտությունը: «Սյունեցիները, քաջ գիտակցելով ազատության գինը, մեծ տեղ ու դեր են տալիս ազգային բանակին, եւ պատահական չէ, որ այսօր իր զինվորական պարտքը կատարող յուրաքանչյուր սյունեցի փայլում է հայրենասիրությամբ եւ օրինակելի ծառայությամբ», - մասնավորապես նշեց քաղաքապետը:



ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի նախագահի տեղակալ Վարազդատ Դոլունցը մաղթեց, որ բացառվեն պատերազմները, իսկ զինվորականներին ցանկացած խաղաղ ծառայություն: Նա հավաստիացրեց, որ երկրապահները մշտապես կանգնած են բանակի թիկունքին:

Գորիսի հոգեւոր հովիվ տեր Ահարոն քահանա Մելքունյանը նշեց, որ պատերազմում զենքերը չեն հաղթում, այլ՝ ոգին, իսկ ոգով հնարավոր է հաղթել միայն միասնական լինելու դեպքում: Պատմության քառուղիներում մեր հաղթանակները կերտվել են խաչի, զորքի ու ժողովրդի միաբանության շնորհիվ:

Նա Տերունական աղոթք առաքեց առ Աստված՝ ակնկալելով հոգու զորություն, հաղթանակ ու փրկություն:

Ներկաներին ողջունեց զինվորի քույրիկ Իննա Գալստյանը՝ իր ոգեշունչ բանաստեղծությամբ:

Կորպուսի կազմավորման 19-ամյակի առթիվ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով ՀՀ ՁՈՒ 5, 10, 15, 20 տարվա ծառայության ընթացքում զինվորական բարձր կարգապահություն ցուցաբերելու եւ անբասիր ծառայության համար 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանների մեդալներով, շնորհակալագրերով, պատվոգրե-

րով եւ 1-ին բանակային կորպուսի արժեքավոր նվերով՝ անվանական ժամացույցով, խրախուսական արձակուրդով պարգևատրվեցին մի շարք զինվորականներ:

ԵԿՄ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանի հրամանով հուշամեդալներով, պատվոգրով մուսուպետ պարգևատրվեցին կորպուսի զինծառայողները:

Միտինգի ավարտից հետո սկսվեց 1-ին բանակային կորպուսի ստորաբաժանումների հանդիսավոր երթը, որի ընթացքում ի ցույց դրվեց զնդերի եւ գունարտակների շարային բարձր պատրաստվածությունը:

Միջոցառման ողջ ընթացքում էկրանին ցուցադրվում էր կորպուսի առօրյան:

Իրենց հմտությունները ցուցադրեցին 2-րդ առանձին մտտիրաձգային գնդի հետախուզական վաշտի զինծառայողները:

Փողային երաժշտությունն ապահովեց 1-ին բանակային կորպուսի համահավաք նվագախումբը՝ կապիտան Սամվել Հայրապետյանի ղեկավարությամբ:

Ձորահանդեսը եւս մեկ անգամ փաստեց, որ մեր ազգային հպարտությունն ու ամենամեծ ձեռքբերումը հայոց բանակն է:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեր սպաները

Օրերս ՌԴ Տվեր քաղաքի «Հաղթանակ» հուշահամալիրում տեղի ունեցավ Գ.Կ.Ժուկովի անվան Օդատիեզերական պաշտպանության զինվորական ակադեմիայի շրջանավարտների դիպլոմ հանձնելու հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը մասնակցում էին ՌԴ պաշտպանության նախարարի տեղակալ Յուրի Բորիսովը, Տվերի նահանգապետ Ա.Շենյուկը, պետական, հոգեւոր եւ զինվորական այրեր:

Ակադեմիայի 2015 թվականի 54 շրջանավարտների շարքերում էին նաև ՀՀ ՁՈՒ սպաներ Սեւակ Տոռոզյանը, Գոռ Նազարեթյանը եւ Գուրգեն Գրիգորյանը:

Ի դեպ, Սեւակ Տոռոզյանը ակադեմիայի կողմից ընտրված այն մի քանի շրջանավարտներից է, որ

մասնակցելու է Կրեմլում կայանալիք զինվորական բուհերի շրջանավարտների ընդունելությանը:

ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի մեր սպաները, որոնք ակադեմիա երկամյա ուսումնառության էին գործուղվել գերազանց ծառայության համար, հայրենիք կվերադառնան մոր զիտելիքներով եւ նոր փորձառությամբ:

Ինչպես տեսնում ենք, հայ սպաները բարձր տրամադրությամբ են հրաժեշտ տալիս ակադեմիային. նրանց սպասում է հայրենիքին ծառայելու սրբազան պարտքը եւ բարձր պատիվը:

Շնորհավորում ենք: Բարի վերադարձ եւ բարի ծառայություն:

ԳԱՐԿ ԿԱՅՐՈՒՄՅԱՆ
ք. Մոսկվա

Հայաստանի պետական սահմանը պաշտպանելիս զոհվել է Արման Եփրեմյանը

Հունիսի 29-ին հայրենի Անգեղակոթ գյուղում հողին հանձնվեց հակառակորդի գնդակից հունիսի 26-ին զոհված Արման Մայիսի Եփրեմյանը: Նախօրյակին՝ հունիսի 28-ին, Արման Եփրեմյանի հոգեհանգստյան արարողությանը, որ վարում էր Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը, մասնակցում էին նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ ՁՈՒ 1-ին եւ 4-րդ բանակային կորպուսների հրամանատարներ Տիգրան Փարվանյանը, Անդրանիկ Մակարյանը, Միսիսի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, ԵԿՄ Միսիսի կառույցի ղեկավար Աշոտ Մինասյանը:

Հունիսի 26-ին, ժամը 18:30-ի սահմաններում հակառակորդը Հայաստան-Նախիջևան սահմանի Սյունիքի մարզի Գորայք բնակավայրի դիրքերի ուղղությամբ, կիրառելով մեծ մեծ տրամաչափի զենքեր, ակտիվ կրակ է վարել: Հայկական կողմի պատասխան կրակից հետո հակառակորդը կրել է բազմաթիվ կորուստներ, սակայն մարտի ընթացքում զոհվել է նաև ՀՀ զինված ուժերի պայմանագրային զինծառայող, շարքային Արման Մայիսի Եփրեմյանը՝ ծնված 1987թ.:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ցավակցել է զոհված հայտղու հարազատներին ու ծառայակիցներին եւ նշել, որ հակառակորդի ոտնձգություններն անպատասխան չեն մնում:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 27-ին հրամանագիր է ստորագրել N զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Արման Եփրեմյանին՝ Հայրենիքի սահմանները պաշտպանելիս, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս ցուցաբերած խիզախության եւ անձնագոհության համար հետմահու Արիության մեդալով պարգևատրելու մասին: ■

Գյուղատնտեսականություն



Գյուղին կփրկի հավաքը, բայց արդյո՞ք կփրկի

Սեւաքար համայնքին թերթը վերջին անգամ անդրադարձել էր 2013 թվականի մարտի 21-ին «Փլուզվել է Սեւաքարի եկեղեցին» հրապարակման մեջ: Այդ թվականի մարտի 9-ին կեսօրից հետո փլուզվել էր գյուղի Սուրբ Յովհաննես եկեղեցին: Գյուղի հավատի տաճարը սկսվել է կառուցվել 19-րդ դարում, իսկ շինարարական աշխատանքներն ավարտվել են 1901 թվականին:

Մինչև 2013 թվականը համայնքի հավատի տունը կիսախարխուլ վիճակում էր, անձրևաջրերից եւ ձյան հալոցքից, տանիքի վրա աճած բուսականությունից այն գրեթե ամբողջովին քանդվեց, ավելի ստույգ՝ կառույցը 80 տոկոսով դուրս եկավ շարքից: Տեղական հեռուստատեսությամբ եկեղեցու փլուզման մասին տեղեկանալուց հետո դրա վերանորոգումը հովանավորելու պատրաստակամություն էր հայտնել Կրասնոյարսկում բնակվող մի հայ գործարար՝ պատվիրելով, որ չիրապարակվի իր անունը: Հայտնեց միայն, որ ինքն արմատներով Այունիքից չէ: Քանի որ դատեր անունն էլ Յովհաննես է, որոշեց փլուզված եկեղեցու վերականգնմանն օգտակար լինել:

Իրոք, բարեգործի հովանավորությամբ համայնք շինարարությունն ավարտվում էր, երբ տեղի ունեցավ անհավատալի ռուսական պատերազմի զոհ դարձավ բարեգործը: Եվ անպատճառ պիտի տրվի այդ մարդու անունը՝ Լեւոն Նահապետյան՝ Էջմիածնի Նորակերտ գյուղից: Այդտեղ էլ ամփոփվեց նրա աճյունը:

Գյուղապետ Արշավիր Հակոբյանը փոխանցում է, որ մինչ այդ միայն հեռախոսագրույց էր ունեցել հովանավորի հետ, կարողացավ մասնակցել նրա հուղարկավորությանը, քառասունքի եւ մահվան տարելիցի արարողություններին: Լեւոն Նահապետյանի ընտանիքը եղել է Սեւաքարում, երբ եկեղեցին այսօրվա վերականգնված տեսքը չուներ, հյու-



Արշավիր Հակոբյան Սեւաքարի գյուղապետ

2013թ. վերականգնված Սեւաքարի Սբ Յովհաննես եկեղեցին



րասիրության արժանացել գյուղում: Ինչեւէ, այժմ անհրաժեշտ է եկեղեցու տարածքը բարեկարգ տեսքի բերել, որից հետո այն կծառայի համայնքի (եւ ոչ միայն) հավատավոր մարդկանց:

Բացի այդ, գյուղապետը տեղեկացնում է, որ որոշակի գումար դեռեւս պարտք է շինարարներին. խնդրել է, վերջիններս ավարտել են աշխատանքը, հիմա կատարված գործի դիմաց վճարելու խնդիր է ծագել: Համագյուղացիներին հանգանակության կոչ է արել, հավաքվել է 2,8 մլն դրամ, այն էլ իր հարազատներից... «Էսօր ոչ մի բան աչքիս առաջ չի գալիս, բացի նրանից, որ եկեղեցին սկսի ծառայել ժողովրդին», - թեման եզրափակում է մեր զրուցակիցը:

Գյուղապետական մյուս կարելիք կառույցը՝ դպրոցը, փակվել է 1994 թվականին: Սրանով ամեն ինչ ասված է, մանավանդ նկատի ունենալով «Գյուղը դպրոցով է կանգուն» ճշմարտությունը: Համայնքի հինգ դպրոցահասակ երեխաները հաճախում են հարեւան՝ ութ կիլոմետր հեռավորության վրա գտնվող եղեգի դպրոցը, ավտոբուսով առավոտյան զնուն եւ նույն փոխադրանքիցով վերադառնում են ժամը տասնվեցին:

Գյուղում եւս յոթ-ութ նախադպրոցական տարիքի երեխա կա: Մինչդեռ պատմական աղբյուրներից տեղեկանում ենք, որ Սեւաքարում դպրոց կառուցվել է 20-րդ դարի սկզբներին՝ Բաքվում բնակվող սեւաքարցիների «Մասիս» ընկերության հովանավորությամբ:

Սեւաքարում խորհրդային տարիներին կյանքը բնական հունով էր ընթանում, դեռեւս 1932-ին կազմակերպվել է կոլտնտեսություն, որ 1964 թվականին միավորվել է Այունիքի խորհրդատեսությանը, գյուղի անասնապահական ֆերմայի համար կառուցվել էր հսկա տիպային անասնագոմ: Այժմ գյուղում 175 մարդ է բնակվում՝ գրանցված չգրանցված (գյուղապետի բնութագրումն է): Ծխերի թիվը 33 է, մոտ այդքան էլ փակ դռներ կան: Համայնքի կյանքն ամռան ամիսներին որոշակի աշխուժանում է հովեկների հաշվին: Բայց դա գյուղի հարատւն է հետ հեռավոր աղերսներ ունի: Իրողությունն (չափազանց տխուր) այն է, որ ով մահանում է, հանգուցյալից հետո այդ տանն այլեւս ապրող չի լինում, եւ կողպեք է կախվում դռնից... Տխուր է խոստովանելը, բայց Սեւաքարը լեռնային որոշ գյուղերի նման ծերացող-մարող համայնք է:

Համայնքային բյուջեի յոթ միլիոն դրամից կեսը լրավճարն է, սեփական եկամուտները հիմնականում գոյանում են հողի հարկից, այն էլ դժվարությամբ: «175 հողաբաժին կա, 25-ն են հարկ վճարում, ճարահատյալ դիմում են սեւաքարցի քնից-շատից ունեւոր մարդկանց, որ գումար հատկացնեն անվճարունակ մարդկանց հարկային պարտքերը փակելու համար», - իրավիճակն է ներկայացնում Ա.Հակոբյանը:

Ի դեպ, վերջերս լայնորեն քննարկվեց, այդ թվում Ազգային ժողովում, Ողջու, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված արտադրական լցակույտերի համալիր մշակման հարցը: Նախատեսվում է լցակույտերի մշակման գործարան կառուցել: Նույնիսկ ծրագրի պատասխանատուները եղել են Սեւաքարում: Որքան հասկացանք, այդ ծրագրի հետ Սեւաքարում հույսեր են կապում...

Սեւաքարը «Ձանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը չորս տարի առաջ 100 հեկտար հող է հատկացրել՝ վարձակալական հիմունքներով: Ընթերցողին հիշեցնենք, որ դա կատարվեց կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N627-N որոշմամբ «ՀՀ Այունիքի մարզի Քաջարանի, Արծվանիկի, Սեւաքարի, Աճանանի, Չափնիի եւ Այունիքի համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին»: Բայց ցայսօր պայմանագիր կնքված չէ, եւ գյուղի բյուջեն դրանից առայժմ ոչ մի օգուտ չի ստանում, ավելի վաղ տրված 32 հեկտար հողատարածության դիմաց կոմբինատը տարեկան 2,6 մլն դրամ է մուծում համայնքային բյուջե: Բացի այդ կոմբինատը խոստացել է նորոգել 40-50 տարվա վաղեմություն ունեցող մեկ կիլոմետր երկարությամբ ջրագիծն ու ջրի ակունքը:

Սեւաքարը նաեւ հանքարդյունաբերության ազդակիր համայնք է. Արծվանիկի պոչամբարը համայնքի հարեւանությամբ է: Գյուղապետն ասում է, որ առավոտյան պոչամբարից յուրահատուկ հոտ է տարածվում եւ դառը կատակում է՝ ասում են այդ հոտը շնչողին քաղցկեղ, ինֆարկտ, կաթված եւ այլ հիվանդությունները շրջանցում են: Մի խոսքով, շատ գյուղերի համեմատ՝ Սեւաքարի հիմնախնդիրներին գումարվում է նաեւ բնապահպանակամը: Այդ հիմնախն-

դիրներից ամենախնդրահարույցն այն է, որ գյուղը զագիֆիկացված չէ, եւ հայտնի չէ, թե կապույտ վառելիքը երբ կբոցկտա սեւաքարցու օջախում:

Սեւաքարցիների հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, դաշտավարությամբ քչերն են զբաղվում: Որոշները նաեւ խոզ են պահում: Բնականաբար, հետաքրքրեց անասնապահական մթերքների իրացման վիճակը: Կաթի մթերման հարցում լուրջ խնդիրներ կան. մի ժամանակ կաթի վերամշակմամբ զբաղվողներից մեկը գյուղում սառնարան էր դրել, մեկ լիտր կաթը գյուղացիներից գնում էր 120 դրամով (ակնհայտորեն ցածր գին), հիմա այդ էլ չկա: Միսը տեղում գնում են մսավաճառները, բնականաբար, իրենց գինն ու պայմանները թելադրելով, փաստորեն անասնապահական մթերք արտադրողը, քրտինք թափողը հայտնվել է երկու քարի արանքում...

Գյուղապետ Արշավիր Հակոբյանը 1994 թվականից հիմնավորվել է հայրենի գյուղում, համայնքը դեկավարում է 1999 թվականից: Տարիներ առաջ ստեղծել է «Քարի նավ» գյուղացիական տնտեսությունը, ժամանակին 150 խոշոր եղջերավոր ուներ, հիմա 30-ն է մնացել: Ասում է, որ այդքանից 60 լիտր կաթ է ստանում, որովհետեւ օգուն ձեռք չունի:

Սեւաքարի գյուղապետարանին մերձ հուշայգին է, որտեղ հուշարձան է կանգնեցված Երկրորդ աշխարհամարտում ընկած սեւաքարցիների հիշատակին: Արցախյան պայքարում համայնքը եւս կորուստներ է ունեցել: 1991-ի մայիսի 6-ին ակամի փորձարկման ժամանակ ստացած



Համլեւ Քոչարյանի կիսանդրին

վերքերից մահացել է Արցախյան շարժման ակունքներում կանգնած Համլեւ Քոչարյանը, ով հետմահու արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի: 1992 թվականի ապրիլի 25-ին մարտական ընկերների հետ զրահամեքենայի մեջ հակառակորդի արկից զոհվեց Գագիկ Ավաբերդյանը: 1993-ին երիտասարդ տարիքում զոհվեց Կարեն Դավթյանը: Համլեւ Քոչարյանի կիսանդրին, երկու ազատամարտիկների հուշաքարերը գալիք սերունդներին կհիշեցնեն մերօրյա ազատամարտի մասին:

Այնուամենայնիվ, ի՞նչ է լինելու լեռնային այս գյուղի ճակատագիրը, ի՞նչը կփրկի գյուղին, - վերջում հարցնում ենք գյուղապետին:

«Հա-վա-տը», - պատասխանում է՝ բառը վանկատելով, - պիտի հավատանք, որ վերջը լավ է լինելու:

Բայց հույսով ու հավատով ապրելն էլ մի բան չէ, ինչպես իմաստուններից մեկն է ասել, հույսը լավ նախաճաշ է, բայց վատ ընթրիք:

ԱՎԱՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Ճանապարհաշինություն



|| Շաքեի խաչմերուկից մինչև Սիսիան քաղաքի վերջ ընկած հատվածը՝ երկու լոտ կամ չափաբաժին՝ 9340 մ երկարությամբ, աշխատանքներն իրականացնում է «Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊ ընկերությունը

լայնությամբ ճանապարհ է եղել, որ տեղ-տեղ քայքայված էր: Բացի դրանից՝ ճանապարհի շատ լայն լինելու իմաստը չեն տեսնում. 2մ-ով լայնացնելու համար հավելյալ գումար է հարկավոր», – նշեց Ա.Անդրեասյանը:

Քանի որ շատ վաղուց այստեղ շինարարական աշխատանքներ չեն կատարվել, ճանապարհը բավականին քայքայված էր: Նախքան ասֆալտապատելը հողային, փոսային աշխատանքներ են կատարել, հարթեցնող շերտ դրել, ապա միայն 4սմ հաստությամբ ասֆալտը փռել: «Ասֆալտի երկրորդ շերտ չի լինելու: Մայրուղում հարթեցնող շերտն ավելի խոր ենք դնում, բայց ասֆալտը բոլոր տեղերում 4 սմ է, երբեմն էլ՝ 5սմ: Խորհրդային տարիներին 2 շերտով էին ասֆալտ փռում. դե այն ժամանակ հումքը բավականին էժան էր, իսկ այսօր...», – նշեց ընկերության տնօրենը:

Գաղտնիք չէ, որ ասֆալտապատման ճանապարհը մեր օրերում երկար չի դիմանում: Մեր մտահոգությունը կիսելով՝ Ա.Անդրեասյանը նշեց, որ յուրաքանչյուր ճանապարհի հիմնանորոգվելուց հետո պիտի պահպանվի, որպեսզի դիմանա: Բացի դրանից՝ այն հատվածներում, որտեղ ջրահեռացումը լավ չի կատարվում, այդ ճանապարհն ապագա չունի, ինչպես ասում են, ջուրն ասֆալտի թշնամին է: Արդեն նշեցինք, որ պատճառներից մեկն էլ ասֆալտի բարակ շերտն է: Ինչ վերաբերում է շինանյութին և ասֆալտի որակին, ապա դրանք պարբերաբար փորձաքննություն են անցնում և համապատասխանեցվում չափորոշիչներին:

Անլուծելի խոչընդոտների չեն հանդիպում, միայն մեխանիզատորի պակաս ունեն, իսկ Սիսիան քաղաքով անցնող ճանապարհի ջրահեռացման համակարգի գրեթե բացակայությունը լուրջ խնդիր է: Նախագծով ջրահեռացման համակարգի կառուցում ներառված չէ, միայն ճանապարհաշինական աշխատանքներ են նախատեսված:

Արմեն Անդրեասյանի հավաստմամբ՝ ընտրվել է քաղաք տանող այս ճանապարհը, որովհետև երթևեկությունն այստեղ առավել ինտենսիվ է, իսկ Մ2-ից Սիսիան ձգվող մյուս ճանապարհը նախատեսվում է հիմնանորոգել հաջորդ տարի:

Նշենք, որ «Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ-ն ճանապարհաշինական ոլորտում արդեն համբավ է ձեռք բերել: 2005 թվականից Սիսիանի տարածաշրջանում մի շարք աշխատանքներ են կատարել՝ մայրուղու որոշ հատվածների ասֆալտապատում, փոսալցում, դեպի Աղիտու, Վաղատին տանող ճանապարհների որոշ չափաբաժինների հիմնանորոգում և այլն:

Ճանապարհի մյուս հատվածների վերանորոգումն իրականացնում է հիմնական կապալառու «Չանգեզուրտրանսշին» ԲԲԸ-ն, ենթակապալառու՝ «Սիսիանի ճանշին» ՍՊԸ-ն:

ԱՐՄԻՆԵ ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիմնանորոգվում է Մ2-Շաքե-Սիսիան-Դասարակերտ-Ցղունի հանրապետական նշանակության ճանապարհը՝ 31.7կմ երկարությամբ

Սիսիան կատարած յուրաքանչյուր այցելության ժամանակ մեզ մտահոգող ամենալուրջ խնդիրը ճանապարհների անմխիթար վիճակն էր: Այս անգամ հաճելիորեն ականատես եղանք Մ2 ավտոմայրուղուց դեպի Սիսիան (Շաքեի խաչմերուկից) տանող հանրապետական նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներին:



տանգության ազդանշաններով, գծանշումով», – տեղեկացրեց «Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ տնօրեն Արմեն Անդրեասյանը:

Ընթացքի մեջ են քաղաքի տարածքով անցնող ճանապարհահատվածի եզրաքարերի, մայթերի նորոգման աշխատանքները: Տնօրենի փոխանցմամբ՝ համապատասխան տեխնիկայի խնդիր ընկերությունը չունի, անհրաժեշտ շինանյութը նույնպես իրենք են արտադրում:

Ծրագրի շրջանակներում արդեն ավարտին է հասցվել Շաքեի խաչմերուկից մինչև Շաքեի գյուղապետարան ընկած հատվածի հիմնանորոգումը:

|| «Մենք ամեն ինչ անում ենք աշխատանքները ժամկետից շուտ ավարտելու համար, եթե ընթացքում խոչընդոտներ չլինեն: Ամբողջ ճանապարհն ասֆալտապատ է լինելու՝ ջրահեռացման առումներով, կողմակներով, անվտանգության ազդանշաններով, գծանշումով»



Արմեն Անդրեասյան «Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ տնօրեն

Տնօրենի փոխանցմամբ՝ ճանապարհը լինելու է 7մ 80սմ լայնությամբ: Նախկինում ճանապարհի տարբեր հատվածներում լայնությունը տարբեր է եղել: «Կարծում են՝ նախագծով սահմանված լայնությունը բավարար է հանրապետական նշանակության ճանապարհի համար: Նախկինում 9, 10, 11 մ

Մարումներ կապանյան ընդդեմ հոսանքի թանկացման բողոքի երթի շուրջ

Ժողովուրդ արժանի է իր ղեկավարությանը, մեզ քիչ է, պիտի սակագինն ավելի շատ բարձրացնեն: Ո՞վ պիտի մեր փոխարեն պայքարի, ներկայացնի մեր շահերը, Հայաստանը միայն երեսանը չէ, միասնակամությունը, նախաձեռնությունը, պիտի սկսվի փոքր բնակավայրերից: Երթի մասնակիցները սակագին բարձրացման հարցում կանգնեցնելու համար, չհուսահատեցրեց կազմակերպիչներին, քանզի նրանք, անկախ հանգամանքներից, շարունակելու են պայքարը, մինչև ազգովի կհասնենք էլեկտրոգիայի սակագնի բարձրացման որոշման կասեցմանը, եւ համոզված են, որ հաջորդ անգամ քաղաքացիներն ավելի շահագրգռված

կլինեն իրենց պահանջատիրական ծայրը բարձրացնելու: Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, թե ինչ հետեւանքների է հանգեցնելու էլեկտրոգիայի թանկացումը: Առանց համոզիչ հիմնավորման բարձրացված սակագինը բերելու է բազում ապրանքատեսակների թանկացման, որ տարեսկզբին արդեն սկսվել էր: Դե մենք էլ հայ ենք, մի քիչ էլ մեր ձեռով կբարձրացնենք գները, ու ամեն ինչ իր տեղը կընկնի. բացի կոմունալ վճարումներից ու «ցամաք» հաց գներուց՝ հասարակ քաղաքացի, դու իրավունք չունես դիմել անելու, շնորհավորում են, դու կմոռանաս փողի տեսքը: Ի դեպ, ծնունդը նույնիսկ կոմունալը չես կարողանա վճարել, որովհետեւ աշխատավարձը չի հերիքի: Վերջերս հանրապետական մամուլում լույս տեսած հոդվածներից մեկում <http://hetq.am/arm/news/60948/miak-tankacumy-ash-khatavardzy-karox-e-linel.html> մամուլում ներկայացվել էին այն ծախսերը, որ անհրաժեշտ է գոյությունը պահելու համար եւ հրավիրել «բոլոր պատասխանատուներից ամենադուրսվորին մեկ օր ապրել մեզ հետ, մեզ պես»: Իսկ այդ պատասխանատուների թեթիվ ծեռքով է, որ այսօր կանգնել ենք նման լուրջ խնդրի առաջ, քանի որ նրանք են ազգային հարստությունը վաճառել օտարներին, իսկ օտարի համար միեւնույն է, թե դու սոված կմնաս: Հարգելի՛ կապանցիներ, պատշաճաբանում կամ խանութի դռներին կանգնելով չէ, որ պիտի ասես, որ լավ եք անում, որ ցույց եք անում: Այդ լավ անողներից մեկն էլ դուք պիտի լինեք: Եկեք հավատանք, որ «գեղ կանգնի, գերան կկտորի»: Չկորցնենք սեփական ուժերին հավատալու կարողությունը՝ իշխանավորների ամենագործությունն ավելի ակնհայտ չդարձնելու համար: Ի դեպ, հանրապետությունում մեկնարկված ցույցերը շարունակվում են... Մինչև ժողովրդի հաղթանակին հասնելու հստակ նպատակի իրականացում:

Ի դեպ, հանրապետությունում մեկնարկված ցույցերը շարունակվում են... Մինչև ժողովրդի հաղթանակին հասնելու հստակ նպատակի իրականացում: **ԱՐՄԻՆԵ ՀԱՌԻԹՅՈՒՆՅԱՆ 19 հունիսի 2015թ.**

Կրթօջախի կես դարը

Նորեյան

Կապանի արվեստի քոլեջը (նախկինում՝ երաժշտական ուսումնարան) բոլորեց իր գոյության կեսդարը: Կրթօջախի 50-ամյա հոբելյանը նշվեց քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում, որի ճեմարանում ներկայացված էին սովորողների աշխատանքները: Դահլիճում նախ էկրանից հնչեցին շնորհավորանքներ եւ բարենաղթանքներ. տարածությունն այլևս անջրպետ չի կարող լինել, որ կրթօջախի՝ արտերկրում գտնվող նվիրյալները տեղ հասցեն իրենց բարենաղթանքը: Հավուր պատշաճի ներկայացվեց ուսումնական հաստատության հինգ տասնամյակով չափվող կենսագրությունը՝ թվերի, փաստերի, լուսանկարների եւ տեսանյութի միջոցով: Ելույթներից մեկում այն միտ-

կառուցվել է ուսումնական մասնաշենքը, համերգային դահլիճը, ուսումնարանը համալրվել է մասնագետներով, Սանկտ Պետերբուրգի տեղափոխվել եւ կապանյան գրանցում է ստացել երգեհոնը: Արցախյան գոյամարտի տարիներին չընդհատվեց ուսումնական գործընթացը: 1992-ի նոյեմբերին քոլեջի ուսումնական մասնաշենքը, երգեհոնային դահլիճը ենթարկվեցին հրետակոծության, որից վնասվեց նաեւ երգեհոնը: Արցախյան գոյամարտի տարիներին Կապանի նոր կազմավորված գործառնախի հրամանատար, փոխգնդապետ Միքայել Գրիգորյանի առաջարկությամբ ուսումնարանի մանկավարժ տղամարդիկ Ֆելիքս Հայրապետյանի ղեկավարությամբ անդամագրվեցին զինվորական նվազախմբին: Այդ ծանր ժամանակահատվածում կապանցիների ոգին բարձրացնե-

ՆԱԽԱԳԱՅԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՅԿԱՅՐԵԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Ված է: Լաւե համոզված են, որ եթե սակագինը չբարձրացնենք, ապա էներգետիկ համակարգը դոմինոյի էֆեկտով փլուզման վտանգի առաջ կկանգնի: Ի վերջո, մեր բնակչության ավելի տարիքով հատվածը երբեք չի մոռանա 1988 թվականին ատոմակայանի փակման հետեւանքները. այն ժամանակ էլ գրեթե բոլորը ոգեւորված էին այդ չակերտավոր չարիքից ազատվելու հարցում, բայց հետո պարզվեց, որ իրական չարիքը հենց ատոմակայանը փակելն էր, ինչը մինչև այսօր իր բացասական ազդեցությունն է թողնում: Նույնը Նաիրիտի հետ կասկած. փակելով այն, դուրս դնելով բնակարանն զարգացման ցիկից՝ հասանք մի իրականության, երբ պետությունը մինչև այսօր ստիպված ու պարտադրված է հավելյալ գումարներ ծախսել այս ուղղությամբ:

Ժրագրերին կամ սոցիալական ծախսերին չենք դիպչի, այլ գումարներ կտանենք անվտանգության հետագա ամրապնդման համար նախատեսվող միջոցներից: Իհարկե, մեր անվտանգության խնդիրները հեռու են լուծված լինելուց, եւ սա մեզմասած, բայց կասկածանքության ու անվտանգության այն մթնոլորտը, որ այսօր կա, եւ նույնպես անվտանգության խնդիր են համարում եւ շատ կարեւոր խնդիր: Դա լուծել է պետք: Իսկ եթե եզրակացությունը հաստատի սակագնի ավելացման հիմնավորվածությունը, ապա այդ պահից սպառողներն առանց որեւէ կասկածի հիմքերի կկսեն վճարել այդ սակագնով:

Ուրեմն եկեք լուծենք խնդիրը եւ եկեք այնպես անենք, որ ընթացքում որեւէ փորձություն չբերենք մեր գլխին: Չափն անցնել որեւէ դեպքում չի կարելի. ուստի կանոնները ի վիճակի է լուծել ցանկացած խնդիր, բայց դա մեր նպատակը չէ: Եվ Աստծո սիրուն, հերիք է կաթածահար անեք քաղաքի կենտրոնը, պատասխանատվության բեռը բոլորիս ուսերին գնալով միայն ավելանալու է, անցեք ավելի հանգիստ միջոցների, ազատեք Բարսեղյան պողոտան եւ օգնեք լուծումների փուլում եւ դրանց հանդեպ վստահության ամրապնդման հարցերում: Այն մեքերտիկ համակարգը, որ այսօր ենք փորձում ենք զարգացնել հիմքերի վրա դնել, բոլորիս համար է, նախ եւ առաջ ձեր սերնդի համար: Լսեք իմ բարեկամական հորդորը, անպայման լսեք: Մի քանի օրից ցանկանում են մի քանի-սիդ հրավիրել գրուցելու. հույս ունեն, որ ավելի հեշտ իրականություն կդարձնենք այդ հանդիպումը: Գործ շատ կա անելու, եւ միասին պիտի ավարտենք այս դժվարին պրոցեսը: Այսքանն էի ուզում ասել իբրեւ մեր այսօրվա խորհրդակցության սկիզբ: Իհարկե, խոսքն ավելի շատ խորհրդակցության մասնակիցներին չէր ուղղված: Այժմ անցնենք մեր բուն աշխատանքին եւ շարունակենք քննարկել հարցերը, այդ թվում՝ էներգետիկ համակարգի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները, այն ծրագրի, որ նախատեսված է իրականացնել 2016-2036թթ.», – խորհրդակցության ժամանակ ասել է նախագահ Սերժ Սարգսյանը:



Միջազգային եւ հանրապետական մրցույթների դափնեկիր եւ դիպլոմակիր Լիա Գրիգորյանը (դաս.՝ Արթուր Մուկիսյան)

լու նպատակով 1993-ի փետրվարի 23-ին կրթօջախի դասախոսների ուժերով հրետակոծությունից տուժած դահլիճում կազմակերպվեց համերգ: 2005-ին երաժշտական ուսումնարանի տնօրեն Լիաննա Հակոբյանի նախաձեռնությամբ շուրջով նշվեց կրթօջախի 40-ամյակը: «Անցած չորս տասնամյակում ուսումնարանը պատվով է կրել իր խաչը: Համոզված են այսուհետ եւս իր դերը կկատարի պատշաճությամբ», – հոբելյանի առթիվ ասել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզայանը: Քոլեջի գործունեությունը միշտ էլ գտնվել է կոնսերվատորիայի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Այսօր էլ շարունակվում է այդ համագործակցությունը (1965-1967), Արմեն Բալասանյանը (1967-1993), Ռոմեո Մարտիրոսյանը (1993-1999), 1999-ից ցայսօր Լիաննա Հակոբյանը: Ուսումնական գործընթացը ղեկավարել են Անժելա Հակոբյանը, Լիաննա Հակոբյանը, Վյաչեսլավ Միրզայանը, 2003 թվականից մինչև օրս Աշոտ Խաչատրյանը: Ուսումնարանում սկզբնական շրջանում դասավանդել են կոնսերվատորիայի շրջանավարտները եւ ասպիրանտները, ապա նրանց փոխարինելու եկան բարձրագույն կրթություն ստացած մասնագետներ, որոնց հետագայում միացան Դավանի երաժշտական ուսումնարանի բուհավարտ սաները: Ծանրակշիռ է կրթօջախի երկարամյա տնօրեն Արմեն Բալասանյանի վաստակը, ում ղեկավարման օրոք

Կարող են բերել տասնյակ այսպիսի օրինակներ: Սակագնի մասին շատ ենք խոսել: Ներկայացվել են բարձրացման օբյեկտիվ 3 հիմքերը: Բերվել են հիմնավորումներ, սակայն ակնհայտ է, որ կա վստահության պակաս: Համարում են, որ կասկածը, անվտանգությունը մեր առաջին թշնամին են նման հարցերում: Առաջին հերթին հենց դա պետք է վերացնենք: Առաջարկում են՝ ընտրել աշխարհում էներգետիկայի ոլորտում մեծ փորձ ունեցող եւ մեծ հեղինակություն վայելող որեւէ միջազգային խորհրդակցական ընկերություն, եթե հարկ կա, այդ ընտրության ժամանակ ներգրավենք նաեւ բողոքի ակցիայի ակտիվ տղաներից մի քանիսին, եւ այդ ընկերությանը հանձնարարենք աուդիտորական ընկերության ներգրավմամբ պատասխանել հետեւյալ հարցերին՝
■ ինչքանով էր հիմնավորված սակագնի բարձրացումը, եւ
■ սակագնի չբարձրացման դեպքում ինչպիսի՞ վտանգներ են սպառնում էներգետիկ համակարգին:
Ինչպես նշեցի, համոզված են՝ սակագնի բարձրացումը չեղյալ հայտարարելը ծայրահեղ վտանգավոր է: Ուստի, մինչև եզրակացության կազմումը այդ ընկերության կողմից կառավարությունը իր վրա կվերցնի սակագնի բարձրացման ամբողջ բեռը: Անշուշտ, մենք ընթացող


Եթե եզրակացությունը հաստատի սակագնի ավելացման անհիմն լինելը, ապա կառավարությունը քայլեր կձեռնարկի բաշխիչ ցանցերից ավելի վճարված գումարը հետ գանձելու եւ թերացած պաշտոնատար անձանց պատասխանատվության կանչելու համար: Այս պայմաններում դեռեւս մի քանի ամիս առաջ կառավարության կողմից սկսված աշխատանքը բաշխիչ էլեկտրական ցանցերի սեփականատիրոջ փոփոխության առումով հաստատում համոզմունք կդառնա՝ չբացառելով նաեւ այն պետությանը վերադարձնելու եւ մրցակցային կառավարման հանձնելու տարբերակը: Սա այն մասով, թե ինչ ուղղություններով ենք աշխատում այս օրերին եւ աշխատում ենք վաղուց: Իհարկե, բազմաթիվ այլ ուղղություններով էլ ենք առաջ գնացել եւ լրջորեն քննարկել: Խնդիրը պետք է լուծել, եւ դրա համար ժամանակ կա: Այս պահին որպես աշխատանքային քննարկումների տրամաբանության մասին իրազեկում, այսքանն էի ցանկանում ասել: Վերջում ավելացնեմ հետեւյալը. Թող որեւէ մեկի մտքով չանցնի, թե սակագնի բարձրացման խնդիրների հետ կապված մեր երկրում կան հակադիր կողմեր, թող որեւէ մեկի մտքով չանցնի, թե կան մերոնք եւ ձեռքը. դա անհեթեթ է այնքան, որքան վտանգավոր է: Ես ուզում եմ նաեւ դիմել բողոքի ծայր բարձրացրած մեր երիտասարդներին. սիրելիներս, մի՛ վախեցեք նոր պատասխանատվություն վերցնել եւ քայլերի մշակման իրական գործընթացին մասնակից

www.president.am



Սպարտակ Բակունցի ծննդյան 60-ամյակը

Հունիսի 14-ին Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի մեծ դահլիճում «Միրիադ» գրական ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված մեր հայրենակից, մեծատաղանդ բանաստեղծ Սպարտակ Բակունցի ծննդյան 60-ամյակին:



Միջոցառումը բանաստեղծի գրական ու մարդկային կերպարն ամբողջացնելու փորձ էր՝ նրա մասին եղած հիշողությունների, մամուլում նրա անունն ու գործը հիշատակող, արժեւորող անդրադարձների, գրքի տպագրությանը նվիրված բազմաթիվ ռադիոհաղորդումների, իր ապրած ժամանակի դառնադետ եղելությունների ընդհանուր համապատկերի վրա:

Օրվա խորհրդին համահունչ ծավալվեց-թանձրացավ Սպարտակ Բակունց մարդու ու բանաստեղծի հոգեւոր ներկայությունը՝ կյանքի կարճատեւ, բայց բովանդակալից ընթացքով, գեղարվեստական ինքնությամբ ու հոգեկերտվածքով:

Նշեցինք գրական-հրեյալեզու-կան տարեդարձ, ցավոք, ոչ թե 60-ամյա բանաստեղծի հետ բաժանված բարձրացնելով ու նրան ստեղծագործական նոր հաջողություններ մաղթելով, այլ նրա մասին արդեն միայն հուշեր պատմելով ու հիշատակի խոսքեր ասելով:

Չայ ժողովուրդը կարծես սովոր է գրական մարդկանց ողբերգական ճակատագրերի: Ընդամենը 37 տարեկանում, ինչպես ասում են՝ բանաստեղծական հասակում մենք հրաժեշտ տվեցինք իր կյանքը լիարժեքորեն չապրած, իր ստեղծագործական մտահղացումները լիովին չիրականացրած, իր վաստակի գնահատությունը չտեսած մի բանաստեղծի, ում եղերաբախտ ճակատագիրը թեւ վաղաժամ հանձնեց ծննդավայրի՝ իրեն ծնած ու սնած հողին, բայց նախասահմանեց հիշարժան ստեղծագործություններով շարունակելու գրական ուղին...

Սպարտակ Բակունցը բանաստեղծ էր ծնվել, բայց հայտնությունը չէր ստանում: Իր ստեղծագործությունները չէին հասնում ընթացքում նա ցերեզնքի: Իր ստեղծագործությունները չէին հասնում ընթացքում նա ցերեզնքի: Իր ստեղծագործությունները չէին հասնում ընթացքում նա ցերեզնքի:

րողություն էր խնդրել Սպարտակից՝ խոստումը դրժելու համար եւ հնչեցրել բանաստեղծությունները...

Իր ստեղծագործությունները ռադիոյով ունկնդրելու գեղեցիկ անվանակալը հավանաբար առաջնից, ոգեւորիչ նշանակություն էր ունեցել բանաստեղծի համար: Եղբայրը՝ Արմիկ Բակունցը, վկայում է, որ այդ դեպքից հետո նա սկսել էր ավելի մեծ ուշադրություն դարձնել ձեռագրերին. խմբագրում էր, մաքրագրում, մեքենագրում, համակարգում... Հավանաբար ներքուստ տրամադրվել էր, որպես բանաստեղծ, ներկայանալու գրական հանրությանը...

Չհասցրեց: Գիրքը՝ «Հայացքների պայքար» խորագրով, լույս տեսավ մահից մեկ տարի անց՝ 1993 թվականին՝ հայ անվանի բանաստեղծ, մանկագիր Երվանդ Պետրոսյանի խմբագրությամբ, Համո Սահյանի սրտաբուխ առաջաբանով եւ Նիկոլայ Մանուկյանի (Նիկո) անգուզական նկարագրողումներով: Ձեռագրերը մեծագույն պատասխանատվությամբ տպագրության էր նախապատրաստել հեղինակի եղբայրը՝ Արմիկ Բակունցը:

Գրողը գիրքն է, Սպարտակ Բակունցի պարագայում նաեւ՝ նրա հուշարձանն ու ավանդը մնացողաց...

Բանաստեղծական ամեն ժողովածու չէ, որ առանձնաշնորհ է ունեցել դրվելու հայ մեծագույն բանաստեղծ Համո Սահյանի գրասեղանին եւ նրան մղել մտորումների, խորատուզումների: Այդ բախտավոր ժողովածուներից մեկը Սպարտակ Բակունցի «Հայացքների պայքարն» էր, որ հեղինակի եղբոր համարձակ որոշումով դրվում է մեծ բանաստեղծի գրասեղանին եւ արժանանում նրա սրտառուց նախախոսքով բացվելու պատվին: «... **Չարմանում ես, որ նա իր կենդանության օրոք ոչ մի տող չի տպագրել** - գրում է Հ.Սահյանը, - **մինչդեռ տպագրության արժանի շատ գործեր ունեն, որ կարող էին պատիվ բերել ոչ միայն հեղինակին, այլեւ գրական 60-ականներից հետո հրականակված բանաստեղծական ամբողջ սերնդին: Երեւի ինքն իր նկատմամբ շատ պահանջկոտ է եղել եւ եղել է երիտասարդական փառասիրություններից հեռու**»: «Հայացքների պայքար» ժողովածուն ամմիջապես արժանանում է գրական հանրության ուշադրությանը: Ամենատարբեր ռադիոհաղորդումների ընթացքում հնչում են երաժշտական դպրոցի (տնօրեն՝ Լիլյա Վարդանյան) կողմից:

Չորսնամակարտ, 2005 թվականից ցայսօր քուլեջի 52 շրջանավարտ ուսումն է շարունակել հանրապետության բուհերում: Հոբեյականակ տարում միջազգային եւ հանրապետական մրցույթների դափնեկիրներ եւ դիպլոմակիրներ են դարձնել Սարիաննա Գասպարյանը (դասախոս՝ Թամարա Հայրումյան), Արկադի Անդրեասյանը (դաս. Լիաննա Ստեփանյան), Լիա Գրիգորյանը (դաս. Արթուր Մովսիսյան), Մերի Պետրոսյանը (դաս. Սարինա Նահապետյան): Քուլեջի ուժերով ներկայացվել են հայ եւ արեւմտեվրոպացի կոմպոզիտորների մեծ կտավի ստեղծագործություններ, ստեղծվել է փողային նվագախումբ, ժողգործիքների անսամբլ:

Քուլեջի անցած կեսդարյան ուղին ներկայացվելուց հետո շնորհավորանքի խոսքով հանդես եկան Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, կրթության եւ գիտության նախարարության նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության բաժնի պետ Սասուն Համբարձումյանը, Կապանի քաղաքապետի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ՀՀ

արվեստի վաստակավոր գործիչ, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Սերգեյ Քեչեկը: Ելույթ ունեցողներն իրենց ներկայացրած նախարարությունների եւ գերատեսչությունների պատվոգրեր եւ շնորհակալագրեր հանձնեցին քուլեջի մի խումբ դասախոսների, իսկ մշակութային կրթության ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի համար եւ քուլեջի 50-ամյակի կապակցությամբ քուլեջի տնօրեն Լիաննա Հակոբյանը պարգևատրվեց ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով: Քուլեջի շնորհակալագիր հանձնվեց մի խումբ աշխատակիցների:

Քուլեջին շնորհավորական ուղերձներ հանձնվեցին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ռեկտոր՝ Շահեն Շահինյան), Հայաստանի երաժշտական ընկերության (նախագահ՝ Դավիթ Դազարյան), «Մշակութային կրթության շաղկուպ» հիմնադրամի (նախագահ՝ Նելլի Սարգսյան-Սարտիրոսյան), պատվոգրի՝ Կապանի գինկոմիսարիատի (գինկոմ, փոխգնդապետ՝ Լեոնիդ Գրիգորյան), շնորհակալագիր՝ Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1

Սպարտակ Բակունցի բանաստեղծությունները հանրապետության վաստակավոր արտիստների, սամունքողների, որոնց թվում՝ Հրաչուհի Ջինանյանի, Վլադիմիր Աբաջյանի, Սարգիս Նաջարյանի եւ Սիլվա Յուզբաշյանի մատուցումով:

Ցերեկույթի ընթացքում հանդիսականների ունկնդրումին ներկայացվեց փոքրիկ ծաղկաքաղ այդ հաղորդումներից ու գրական ընթերցումներից:

Սպարտակ Բակունցի պոեզիայով ներշնչվել եւ նրա խոսքերով երգ է հեղինակել հայ մեծանուն երգահան, դիրիժոր, երաժշտագետ, «Շարական» համույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտը:

1995 թվականի Յուլիանի 26-ին Դանիել Երաժիշտը Գորիսում հանդես եկավ համերգային բացառիկ ծրագրով՝ նվիրված Սպարտակ Բակունցի հիշատակին: Հենց համերգի ժամանակ էլ առաջին անգամ հնչեց բանաստեղծի խոսքերով գրված երգը՝ «Շարական» համույթի կատարմամբ:

20 տարի անց նույն բեմում «Կյանքի կարոտ» խորագրով երգն առաջին անգամ կատարեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի շնորհաշատ երգչուհի Սուսաննա Դումաշյանը:

Հանդիսությանը ներկա էր նաեւ «Հայացքների պայքար» գրքի խմբագիր, ճանաչված գրող, մանկագիր Երվանդ Պետրոսյանը, ով տպավորիչ խոսք ասաց իր կյանքում Սպարտակ Բակունցի հայտնության մասին՝ ներկայացնելով նաեւ գրքի տպագրության ուշագրավ հանգամանքները, այն անօրինակ ջանքերը, որոնք, ի վերջո, փառասիրական ժողովածուի լույս աշխարհ գալով: Ե.Պետրոսյանը հպարտությամբ նշեց նաեւ, որ պատիվ է ունեցել ոչ միայն խմբագրելու Սպարտակի գիրքը, այլեւ նախախոսք հեղինակելու:

Սպարտակ Բակունցը բանաստեղծական ներկայություն է ոչ միայն Այոնիքում: Իր հոգու տարածքները մեծ աշխարհագրական բացվածքի մեջ են:

Վայք քաղաքից հանդիսության առթիվ Գորիս էր ժամանել ռեժիսոր Սարգիս Սարգսյանը, ով, ներգրավված լինելով միջոցառման գեղարվեստական բեմագրում, հանդես եկավ նաեւ առանձին ելույթով եւ խոստովանեց, որ հոգեւոր ամուր կապ է գզում բանաստեղծի հետ եւ ճակատագրի քննուշ շոյանքով իր

ծեռքին հայտնված «Հայացքների պայքար»-ը վաղուց արդեն իր սեղանի գիրքն ու կյանքի ուղեկցիչն էր մեկն է դարձել:

Վերջերս Վայք քաղաքում հենց Ս.Սարգսյանի բեմադրությամբ տեղի ունեցած միջոցառման ընթացքում (նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին) հնչել են նաեւ Սպարտակ Բակունցի հայրենասիրական բանաստեղծությունները: Միջոցառման այդ հատվածները ցերեկույթի ընթացքում ներկայացվեցին նաեւ Գորիսի հանդիսատեսին:

Սպարտակ Բակունցի պոեզիան արժանի է բարձր գնահատանքի, ինչն ընդունում է նրա պոեզիային ծանոթ մտավորական ընտրանին: Բանաստեղծի տեղը, ի վերջո, գրականագիտությունն է: Սպարտակ Բակունցի գեղարվեստական աշխարհում մասնագիտական իր համեստ ուսումնասիրության արդյունքները հանդիսականներին ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դասախոս Լ.Թունյանը:

Միջոցառման ավարտին բանաստեղծի մասին հիշատակի ու գնահատանքի խոսք ասացին Գորիսի քաղաքապետ Վ.Աղունցը, բանաստեղծի դասընկեր ու գրչընկեր Լեւոն Սահակյանը, բանաստեղծ Ավետիսյանի Գրիգորյանը եւ ուրիշներ:

Միջոցառման ուղեկցվեց դիտապատասխան տպավորիչ ցուցադրություններով, որոնք ուրույն երանգ հաղորդեցին գեղարվեստական մասին եւ ամբողջացրին բանաստեղծի դիմանկարը:

Ոգեշունջ պարային համարով միջոցառումը եզրափակեցին «Վահե Մելքոնյան» պարային ստուդիայի սաները:

Բառերի մեջ է ամբարվում ժամանակի ոգին, բառերի մեջ են պահվում ժամանակի ձայները՝ մարդկանց մտքերը, հույզերը, խոհերը, տրամադրությունները, երազանքներն ու առարկայական իրակամությունը: Պոեզիան դառնում է ժամանակի եւության կրողը: Պոեզիան նաեւ պատմություն է...

Սպարտակ Բակունցի երկրային կյանքի ժամանակը, հոգու կենսագրությունն ու հայացքների պայքարն ամբարված են ծավալով ոչ մեծ ընդամենը մեկ ժողովածուում, որին, սակայն, վիճակված է երկար ճանապարհ անցնելու, հավիտենական ժամանակի ուղեւորը դառնալու:

ԹԵՆԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ



Հրեյանական հանդիսությունը եզրափակվեց Արթուր Աղամյանի կատարումով (երգեհոն):

Քուլեջի 50-ամյա հոբեյանին նվիրված միջոցառումների շրջանակում քուլեջի Վ.Ստամբոլյանի անվան երգչուհուհային դահլիճում օրեր առաջ համերգով հանդես եկան Երեւանի Ալեքսանդր Սպեցիալային անվան երաժշտական դպրոցի (դասախոս, ՀՀ արվեստի վաստա-

կավոր գործիչ, պրոֆեսոր Սերգեյ Քեչեկ), ՀՀ եւ ԼՂՀ երիտասարդ տաղանդավոր երաժիշտների զարգացման ծրագրի (ղեկավար՝ պրոֆեսոր Արմեն Բաբախանյան), Երեւանի Սալաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի (ղեկավար՝ Տիգրան Թոհրամաշյան), Սյունիքի մարզի երաժշտական եւ արվեստի դպրոցի սաները:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ

«Քաջարան. վերին ձորի երեւելի մարդիկ»

Հոբելյան եւ շնորհանդէս

Հունիսի 24-ին Կապանի մշակույթի կենտրոնի կինոդահլիճում տեղի ունեցավ վաստակաշատ շինարար Վոլոդյա Աբրահամյանի «Քաջարան. վերին ձորի երեւելի մարդիկ» գրքի շնորհանդէսը: Բայց գրքի հեղինակը ոչ միայն նոր լույս տեսած գրքի առիթով էր շնորհավորանքներ ստանում. լրացել էր Վոլոդյա Աբրահամյանի ծննդյան 80-ամյակը: Քավուր պատշաճի տեսանյութի եւ լուսանկարների միջոցով ներկայացվեցին նրա կյանքի հիշարժան դրվագները, որոնց մի գերակշիռ մասը վերաբերում էր Արցախյան պատերազմին, Վոլոդյա Աբրահամյանի մասնակցությանը մերօրյա բանակաշինությանը:

Վոլոդյա Աբրահամյան մարդու եւ շինարարի մասին գնահատանքի խոսք ասաց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ մասնավորապես ընդգծելով նրա դերը 1968 թվականի երկրաշարժի հետեւանքների վերացման եւ բանակաշինության գործում: ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդակցական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը ներկայացրեց հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին եւ դրանից հետո Վոլոդյա Աբրահամյանի գործունեությունը, պատմեց այդ ժամանակահատվածում իրենց համագործակցության եւ ընկերության մասին եւ հրապարակեց ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը նրան «Գարեգին Նժդեհ» մեդալով

պարգևատրելու մասին: Վոլոդյա Աբրահամյանի կյանքն ու գործն իրենց ելույթներում արժեւորեցին Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Սվետլանա Գեւորգյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանն ու Ռոբերտ Էջաննցին անդրադարձան «Քաջարան. վերին ձորի երեւելի մարդիկ» գրքի հայրենագիտական-ճանաչողական արժեքին: Հոբելյանին հանձնվեցին հուշամվերներ Կապանի քաղաքապետարանի, Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի կողմից եւ Հայաստանի հանքագործների ու մետալուրգների միության հուշամեդալը: Վերջում բարեմաղթանքների համար շնորհակալություն հայտնեց հոբելյարը եւ պատմեց գրքի ստեղծման շարժառիթների մասին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Խաղաղության կորպուսի կամավորները՝ Սյունիքում

Հունիսի 19-ին Սյունիք գյուղի միջնակարգ դպրոցում ԱՄՆ դեսպանատան Խաղաղության կորպուսի կամավորները հերթական անգամ անցկացրին դասընթաց աշակերտների համար: 2012 թվականից կամավորները, ըստ նախնական պայմանավորվածության, այցելելով տարբեր դպրոցներ, անց են կացնում դասընթացներ էկոլոգիայի, առողջ ապրելակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության եւ այլ թեմաներով:

տակում է Փեյջը: Գորիսից կամավորներին միացած Հայկը նշեց, որ 6 հոգուց կազմված խումբը 21 օր աշխատելու է մարզում, նրանց երբեմն միանում է Գյումրուց եկած 14 հոգանոց եւս երկու խումբ: Կամավորները ուսուցում են անցնում ողջ ճանապարհը, գիշերում՝ հիմնականում վրաններում: Հունիսի 19-ի դրությամբ դասընթացներ արդեն անց էին կացվել Ծավում, Շիկահողում, Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում, Կապանի Ամերիկյան անկյունում: Այս խումբը կհասնի մինչեւ Եղեգնաձոր: Հիմնական դժվարությունը

ուռաչին հայացքից թվում է, թե պետք է լեզվի խնդիր առաջանա, բայց երեխաները նշեցին, որ այդ խնդիրը չկա, քանի որ կամավորները նույնպես որոշակիորեն տիրապետում են հայերենին: Բացի դրանից՝ ժեստերով են հասկանում միմյանց:

«Երեխաներն ամենամյա դասընթացներին մեծ ոգեւորությամբ են մասնակցում, մենք էլ ձգտում ենք մտահոտիկ միջոցառումների առավել շատ մասնակցի դարձնել նրանց, քանի որ այդ ընթացքում երեխաների հատկապես ներքին կուլտուրան է բարձրացնում: Ամառային արձակուրդի ընթացքում աշակերտները մասնակցում են նաեւ «Վորլդ Վիժ»-ի, մարզպետարանի կողմից կազմակերպվող ճամբարներին», – նշեց տնօրեն Արթուր Մնացականյանը:

Տնօրենի տեղեկացմամբ՝ իրենց դպրոցը պատահականության սկզբունքով են ընտրել, բայց արդյունքը գոհացուցիչ է, եւ տարբեր մասնակցի աշակերտների թիվն ավելանում է:

Աշակերտները նշեցին, որ մեծ հաճույքով են մասնակցում դասընթացներին, հեշտությամբ են հաղորդակցվում կամավորների հետ: Մեր այցելության պահին նրանք սովորում էին, թե ինչպես պետք է աճեցնել լոբին:

Կամավորները մասնակցիներին նվիրում են գնդակներ, գրեմական պիտույքներ:

Խաղաղության կորպուսի կամավոր Փեյջը, ով տեւական ժամանակ է Կապանում է, նշեց, որ երեխաների ակտիվությունն անընդհատ նոր գիտելիքներ ստանալու հետաքրքրվածությունն իրենց ավելի շատ են ոգեւորում: Փեյջի համար ամենամեծ դժվարությունն անընդհատ, որպես ամերիկացի, բնակիչների ուշադրության կենտրոնում լինելն է եւ կարողը:

«Եթե ամուսինս ԱՄՆ-ում չլիներ, ես կմնայի այստեղ», – կա-

տեղաշարժման հետ է կապված. նրանք տասնյակ կմ-եր ոտքով են անցնում: Քանի որ ծրագրի հիմնական նպատակն առողջ ապրելակերպ դասավանդելն է, ուստի նրանք հարմար են գտել սեփական օրինակով ցույց տալ առողջ ապրելակերպի (ի դեպ, ոտքով քայլելն առողջարար է) պայմանները:

Ծրագիրը գործում է երկու ուղղությամբ՝ անգլերենի ուսուցում եւ քաղաքացիական հասարակության զարգացում: Ներառված դասընթացները հիմնականում միջավայրի մաքրության, առողջ սննդի, կոնֆլիկտների, գենդերային հավասարության եւ մարդու իրավունքների մասին են: Համագործակցում են վերաբարձրական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ:

Այս տարի գրանտի գումարը կազմում է 5000 դոլար: Կամավորներն այդ գումարով ձեռք են բերում սնունդ՝ իրենց համար եւ անհրաժեշտ պիտույքներ՝ դասընթացներ վարելու համար:

Հարցին, թե ինչու են ոտքով տեղաշարժվում, պատասխանեցին, որ պատճառը նաեւ գումար խնայելու մեջ է:

Կամավորները երեք ամիս մնում են Երեւանում՝ հայերեն սովորելու համար, որից հետո հյուրընկալ ընտանիքում՝ եւս երեք ամիս, այնուհետեւ իրավունք ունեն երկու տարի մնալ այստեղ, ցանկության դեպքում հետագայում կարող են երկարաժամկետ պայմանագիրը:

Նշենք, որ ԱՄՆ դեսպանատան Խաղաղության կորպուսը Հայաստանում սկսել է գործել 1992 թվականից ՀՀ կառավարության հրավերով: Այդ ժամանակներից ի վեր բազում կամավորներ են աշխատել մեր երկրում՝ նպատակ ունենալով մասնագիտական օգնություն ցուցաբերել հյուրընկալ երկրներին, խորացնել հայ եւ ամերիկյան ժողովուրդների՝ միմյանց հանդեպ ունեցած պատկերացումները:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք հիւսիսի

Կառլեն Կոզմանով

Նրա մահը հանկարծակի էր եւ անհավատալի. մեր շրջապատից բացակայեց Սյունիքի մարզպետարանում ուրույն դիմագիծ ու ձեռագիր ունեցող Կառլեն Կոզմանովը, ով մարզպետարանի իրավաբանական բաժնի պետն էր 1998 թվականից: Նա անթերի ու ամբողջ ծավալով մասնակցում էր մարզպետարանի աշխատակազմի ռազմավարական եւ կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտման, վերլուծման եւ գնահատման աշխատանքներին, իրականացնում իր պաշտոնական գործառնություններից բխող մասնագիտական խնդիրների լուծումը:



Տասնութ տարուց ավելի աշխատելով մարզպետարանում՝ նա լիարժեք էր իրականացնում վերահսկողություն իրավական ակտերի, որոշումների, կարգադրությունների եւ հրամանների նկատմամբ ու հետեւում դրանց համապատասխանությանը ՀՀ օրենսդրությանը: Կառլեն Կոզմանովը փորձառու իրավաբանի հմտությամբ ապահովում էր մարզային ենթակայության ընկերությունների, հիմնարկների ու կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների վերահսկումը եւ ժամանակին ներկայացնում համապատասխան առաջարկություններ: Ընդհանրապես մեր է հիշվում, թե ինչպես էր նա ապահովում մարզում տարածքային կառավարման մարմինների գործառնությունների վերաբերող ՀՀ նախագահի հրամանագրերի, ՀՀ օրենքների, կա-

ռավարության եւ վարչապետի որոշումների կատարումը: Արժանապատիվ քաղաքացու կեցվածքով էր կատարում իր պարտականությունները: Կառլեն Կոզմանովը հայրենասեր մարդ էր, ում համար Կապանն ու Սյունիքը, Հայաստան աշխարհը բացառակալ արժեքներ էին: Նրա հայրենասիրությունն առավել վառ դրսևորվեց Արցախյան ազատամարտի տարիներին, երբ գեներ ձեռքին պաշտպանում էր հայրենիքի սահմանները: Մի փոքր բռնկում, սակայն բարի ու պատրաստակամ մարդ էր Կառլեն Կոզմանովը, ում գիտելիքներն ու փորձառությունը ծառայում էին մարզի առջեւ ծառայած խնդիրների լուծմանը: Ապրեց ընդամենը 62 տարի, բայց դա լիարժեքորեն հագեցած կյանք էր: ՀՀ Սյունիքի մարզպետարանի կոլեկտիվը ցավակցում է Կառլեն Կոզմանովի ընտանիքին, հարազատներին եւ ընկերներին ու կիսում նրանց խոր վիշտը: **Սյունիքի մարզպետարան**

Ընդհանրապես Երախտագիտությունն են հայտնում «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության թերապեւտիկ բաժանմունքի վարիչ Գայանե Այվազյանին, նյարդաբան-օրոհիմատոլոգ Աշիսեն Խաչատրյանին, թերապեւտ-օրոհիմատոլոգ Սարինե Քոչարյանին, ինժեներ Երիտասարդ, բանիմաց բժշկուհի, նյարդաբան-օրոհիմատոլոգ Լիլիթ Թադևոսյանին, միջին եւ կրտսեր բուժաշխատողներին: Իմ հանդեպ դրսևորած նրանց ջանքերի, հոգատարության եւ արհեստավարժության շնորհիվ վերագտա իմ երկրորդ կյանքը:

ՈԱՅԻՎ ԱՌԱՅԱՆ, Քաջարանի գյուղապետ

Հայտարարություն

Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի 2015-16 ուստարվա համար, առկա ուսուցմամբ, կապարվում է ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով՝

I. Միջնակարգ կրթության հիմքի վրա՝ ուսման տեսչությունը երկու տարի.

1. Գյուղմեքենայացում /որակավորումը՝ տեխնիկ-մեխանիկ/ պետ. պատվերով՝ անվճար 20 տեղ,
2. Մեքենաբանություն /որակավորումը՝ կառավարիչ /մեքենաբան/, պետական պատվերով 4 տեղ, վճարովի՝ 11 տեղ, ուսմ. վճարը՝ 80000 դրամ,
3. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ/որակավորումը՝ կրտսեր տնտեսագետ, պետական պատվերով 4 տեղ, վճարովի՝ 11 տեղ, ուսմ. վճարը՝ 80000 դրամ: Կրթաթոշակը՝ 4750 դրամ՝ բոլոր մասնագիտությունների համար:

II. Հիմնական կրթության/8-ամյա եւ 9-ամյա / հիմքի վրա.

1. Գյուղմեքենայացում /որակավորումը՝ տեխնիկ-մեխանիկ/ պետ. պատվերով՝ անվճար 15 տեղ, ուսման տեսչությունը՝ 3 տարի: Կրթաթոշակը՝ 4750 դրամ:

Նախնական-մասնագիտական/արհեստագործական կրթության բաժին՝ հիմնական կրթության հիմքի վրա.

1. Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում/որակավորումը՝ լայն

պրոֆիլի տրակտորիստ-մեքենավար, պետական պատվերով՝ անվճար 20 տեղ, կրթաթոշակը՝ 4650 դրամ: Ուսման տեսչությունը՝ 3 տարի:

Դիմորդը՝ քոլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում՝ օրինական ներկայացուցչի հետ, պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը .

1. դիմում,
2. 4 լուսանկար՝ 3x4 չափսի,
3. Կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը՝ նոտարական հաստատումով,
4. Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ ծննդյան վկայական՝ մինչեւ 16 տարեկան դիմորդի համար/ զին.հաշվ. վկայական կամ գրքույկ, անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.../
5. Կցագրման վկայական/զորակոչային տարիք ունեցող դիմորդից՝ համապատասխան նշումով:

1000դրամ/անապահով ընտանիքների երեխաների համար գեղջվում է՝ ընդունելու. գործընթացի կազմակերպման եւ անցկացման համար:

Քոլեջի ընդունելությունը բոլոր մասնագիտությունների համար, անվճար եւ վճարովի հիմունքներով՝ առանց ընդունելության քննությունների՝ հարցազրույցով: Փաստաթղթերի ընդունելությունը հունիսի 25-ից մինչեւ օգոստոսի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 9:00-16:00:

Հասցեն՝ ք.Գորիս, Առաքելյան 32, Հեռախոս՝ (0284) 2 21 47, (0284) 2 06 48, (099) 33 07 37:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆՈՒՄԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՄՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԽԱՐԳ»

ՍԱՀՄԱՆՈՒԿ ՊՆՏԱՍԽԱՆՏ-ՎՈՒԹՅԱՒ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՎԿԵԼ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փոճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՊՆՏԱՍԽԱՆՏԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրական՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 01.07.2015թ.: